

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հոդված 12. Մշտական հանձնաժողովի լիազորությունները

1. Մշտական հանձնաժողովն իր իրավասության շրջանակում՝
 - 1) իրականացնում է գլխադասային հանձնաժողովի լիազորությունները.
 - 2) իրականացնում է խորհրդարանական վերահսկողություն.
 - 3) պաշտոններում ընտրության կամ նշանակման համար Ազգային ժողովին առաջարկում է թեկնածուներ.
 - 4) կարող է հարցումներով դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց.
 - 5) կարող է հրավիրել խորհրդարանական լսումներ.
 - 6) կարող է ստեղծել ենթահանձնաժողովներ և աշխատանքային խմբեր.
 - 7) քննարկում է Ազգային ժողովի նախագահի կողմից հանձնաժողով ուղարկված հանրագրերը և պատասխանում է դրանց:
2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են երեքշաբաթյա ժամկետում քննարկել հանձնաժողովի գրավոր հարցումը և գրավոր պատասխանել նրան:
3. Մշտական հանձնաժողովը կարող է իր իրավասությանը վերապահված հարցերի նախնական քննարկման և դրա արդյունքները հանձնաժողով ներկայացնելու նպատակով իր որոշմամբ, Աշխատակարգով սահմանված կարգով ստեղծել ենթահանձնաժողովներ կամ աշխատանքային խմբեր: Ենթահանձնաժողովը կամ աշխատանքային խումբը կարող է լուծարվել հանձնաժողովի որոշմամբ:
4. Մշտական հանձնաժողովն ունի իր աշխատակարգը, որը, խորհրդի սահմանած օրինակելի աշխատակարգին համապատասխան, հաստատվում է հանձնաժողովի որոշմամբ:
5. Մշտական հանձնաժողովի լիազորություններն ավարտվում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում:

(12-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-22-Ն)

Հոդված 12¹. Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների ոլորտի մշտական հանձնաժողովի լիազորությունները

Բացի Կանոնակարգի 12-րդ հոդվածով նախատեսված լիազորություններից, Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների ոլորտի մշտական հանձնաժողովը նաև՝

- 1) օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված՝ Հայաստանի Հանրապետության դեսպանների և/կամ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հետ, նրանց

առաջադրվելուց հետո՝ մինչև նշանակվելը, կազմակերպում է հանդիպում հանձնաժողովի անդամների հետ,

- 2) իր գործունեության ոլորտներին վերաբերող հարցերով օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված դեսպանների և/կամ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հետ կազմակերպում է համատեղ հանդիպումներ:

Սույն հոդվածով նախատեսված հանդիպումներն իրականացվում են դռնբաց ընթացակարգով՝ բազառությամբ այն դեպքերի, երբ հանձնաժողովն իր անդամների ծայների մեծամասնությամբ որոշում է կայացնում հանդիպումը դռնփակ ընթացակարգով անցկացնելու վերաբերյալ: Հանդիպումը դռնփակ անցկացնելու մասին առաջարկություն կարող է ներկայացնել հանձնաժողովի անդամը:

Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանդիպումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովը կազմում է համապատասխանության վերաբերյալ եզրակացություն, որն ունի խորհրդատվական նշանակություն: